

անոնց համար բնութեան Արարիչն<sup>1</sup> :  
 Իսկ Արար պատմիչներ եւ աշխարհա-  
 գիրներ միահամուռ կը վկայեն թէ Հայոց  
 Դուինը կամ անոր գրեթէ կից Արտաշատը  
 նշանաւոր էին իրենց Որդանի արտադրու-  
 թիւններով : Այդ մասին աւելի պիտի ծա-  
 նրանամ նիւթիս պատմական շրջանին մէջ :

Ուրեմն բացարձակ է որ Հայաստան  
 կ'արտադրէր Որդան կամ կարմիր, որ  
 Արարացոց աշխարհին ծանօթ էր իբրեւ  
 Գրքմրգ, որ ըստ իս միայն Որդանին հա-  
 մար տրուած անուանածեւ է :

Արդ խօսինք Որդանին պատմական ան-  
 ցեակին վրայօք :

Քրիստոսէ ութը դար առաջ երբ Սարգոն  
 կը գրաւէր Ուրարտուի գանձերը, հպար-  
 տութեամբ կը յիշէր<sup>2</sup> Ասուր աստուծոյ  
 ուղղեալ իր արձանագիր նամակին մէջ  
 թէ թանկագին իրերու կարգին ձեռք ձգած  
 է նաեւ «Կուրխայի և Արարատի» նշանա-  
 ւոր կարմիր հիւսուածեղէնէն : Դիտելի է  
 որ հիւսուածեղէնը նշանաւոր էր ոչ թէ  
 իր հիւսուածակերպին համար այլ իր կար-  
 միր գոյնին համար : Այն ատեն Նախա-  
 հայաստանի այսինքն Ուրարտուի ծանօթ  
 էին երկու տեսակ ներկեր, մին յայրաւ  
 կամ զայրա, որով սակայն աւելի շիկափոկ  
 կը պատրաստուէր, ուստի նշանաւոր չէր  
 հիւսուածեղէն ներկուելու համար, իսկ  
 միւսն էր որդանը, կարմիր կամ գրքմրգ :  
 Ես միայն այս երկու ծիրանի գոյները  
 նկատի կ'առնեմ, որովհետեւ տորոնէն կամ  
 ուրիշ նիւթերէ արտադրուած այդ գոյնը  
 անկարելի է թէ որ և է կերպով մօտեցած  
 ըլլայ Որդանի բարձրութեան :

Արդեօք ի՞նչ էր այդ կարմիրին տրուած  
 անունը այն ատենուան իր բուն ձեւով :

Անորոշ կերպով կը վկայուի որ «Գրք-  
 մրգը ծանօթ ամենահին ներկն է, որով-  
 հետեւ Մովսէսի օրերուն իսկ ծանօթ էր,  
 և Ս. Գրքին մէջ յիշուած է Երբայեցերէն  
 tola կամ tolashani անուամբ ծիրանի  
 (= red) բառը որ շատ անգամ հոն կը  
 գործածուի, անտարակոյս գրքմրգէն պա-  
 տրաստուած գոյնին կ'ակնարկէ : Ըստ  
 Tychsenti (հմտ. Bancroft, Philoso-

phy of Permanent Colours I. 394.)  
 ծիրանի (= red) կամ գրքմրգ ներկը  
 ծանօթ էր Մովսէսէն ալ առաջ և գտնուած  
 էր Փիւնիկեցիներէն Պաղեստինի մէջ,  
 անշուշտ ոչ թափառական մանր Երբայեցի  
 ցեղերէն, cocceus անուամբ յաճախ սկ-  
 նարկուած է Յոյն և Լատին գրողներէ»<sup>3</sup> :  
 Հոս սակայն կարգ մը խնդիրներ կան  
 քննուելիք. նախ Ս. Գրոց tola կամ to-  
 lashaniին նաեւ հոն յիշուած ծիրանի-  
 ներկը կրնան որդանը կամ գրքմրգը չնշա-  
 նակել այլ ծիրանի, շառագոյն, շէկ,  
 բոսոր եւն., թէև հաւանական է որ որ-  
 դանին կամ գրքմրգին ակնարկուի, նկատի  
 առնելով ասոր համբաւը, և պատճառ մը  
 չկայ չխորհելու որ գրքմրգը ծանօթ չըլլար  
 Մովսէսէ ալ առաջ : Գալով Փիւնիկեցոց  
 կողմէն Պաղեստինի մէջ գտնուելուն, ասոր  
 համար ալ կան բացատրութեան կարեւոր  
 կէտեր. նախ Պաղեստին չունի ոչ սէզը  
 և ոչ ալ կլիմայի յարմարութիւն այդ  
 սէզին և որով որդին համար, մինչ Հա-  
 յաստան դեռ կ'արտադրէ որդան այժմ  
 գրեթէ շատ չնչին չափերով, և անցեալին  
 մէջ միակ արտադրիչն եղած է : Պաղես-  
 տինի մասին այդպիսի վկայութիւն մը  
 բոլորովին կը պակսի : Իսկ Փիւնիկեցիք  
 ծանօթ էին իրենց վաճառականական յա-  
 բարեբուծիւններով, անտարակոյս անոնց  
 միջոցաւ Հայաստանէն արտածուած է  
 Եզրպտոս, Պաղեստին և այլուր տարուած :  
 Հին դարուց պատմագիրները, ինչպէս Դի-  
 ոսկոր, Թոթոնիս, և այլք, կը վկայեն  
 թէ այս ներկը ամենէն առաջ գործածուե-  
 ցաւ Հայաստանի և Պարսկաստանի մէջ,  
 և թէ այս երկիրներէն տարածուեցաւ ան  
 Եւրոպայի ամէն կողմը»<sup>4</sup> : Յետոյ «Հոռ-  
 մայեցոց պատմիչներէն մէկը կ'ըսէ թէ  
 (Գի. 275 թուականին ատենները) Պարսից  
 թագաւորը Աւրեղիանոս կայսեր ընծայ  
 զրկեց բոլոր բանուածք մը՝ ըսելով. Ընկալ  
 զժիրակիդ մերոյ աշխարհիս. Sume pur-

1. «Բագմալէզ», 1890, էջ 276-277.  
 2. «Բագմալէզ», 1890, էջ 276-277.  
 3. Encycl. Brit. 14th edition. vol. 13 p. 352.  
 4. Կոչնակ. Նիւ Եօրը 1927 էջ 396.